ՀԽՍՀ ԳԱ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲԱԺՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

Դեկտեմբերի 19—20-ին տեղի ունեցավ ՀԽՍՀ ԳԱ սփյուռքահայ համայնքների պատմության և մշակույթի բաժնի տարեկան գիտական նստաշրջանը։ Բացման խոսքով հանդես եկավ բաժնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր Կ. Լ. Դալլաֆյանը։ Նա մասնավորապես ասաց, որ քաղաքական նոր մտածողության ոգով սփյուռք-հայրենիք կապերը որակական փոփոխություններ են կրում։ Խոսելով այդ կապերի ամրապնդման ու զարգացման, հայրենիք-սփյուռք միասնության, ազգային միարանության մասին, նա նշեց, որ այդ գործակցությունը պետք է իրականանա դեմոկրատական, ապագաղափարախոսական լայն հենքի վրա և ամենից առաջ թելադրվի համազգային շահերով։ Այդ գործում իր ներդրումը պետք է ունենա սփյուռքահայ համայնքների և մշակույթի պատմության բաժինը, որի աշխատանքում հարցերի ուսումնասիրության ժամանակ առաջնային պետք է լինի հայացքների, դիտական եզրահանգումների օբյեկտիվությունը, առարկայականությունը, իրադրությունների ռեալիստական գնահատականը։

Ակադեմիկոս Դ. Բ. Ղարիբջանյանի և պատմական գիտությունների թեկնածու Ս. Ա. Սարգսյանի զեկուցման վերնագիրն էր՝ «Սփյուռքի պատմության և մշակույթի հարցերի պրոպագանդը ՀԽՍՀ ԳԱ հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոնի թողարկումներում»։ Ներկայացնելով զեկուցումը, Գ. Բ. Ղարիբջանյանը նշեց, որ կենտրոնի գործունեության մեջ օբյեկտիվ ինֆորմացիա տալու առումով առանձնացվում է «Հայագիտությունն արտասահմանում» մատենաշարը։ Դա ոչ միայն գիտական, այլև քաղաքական կարևոր նշանակություն ունի բուրժուական հեռատիմական գաղափարախոսության և պատմության կեղծարարների դեմ պայքարի ուժեղացման պայմաններում։ Ժամանակակից Թուրքիայի և Ադրբեջանի պաշտոնական շրջանները, նրանց պատմագիտությունը ջանք ու եռանդ չեն խնայում պատմության իսկական ու իրական փաստերը խեղաթյուրելու և աղավաղելու համար։ Գ. Ղարիբջանյանը հանգամանորեն անդրադարձավ այդ տեսանկյունից կենտրոնի աշխատանքներին, թվարկեց թողարկված այն հիմնական գործերը, որոնք նպատակամղվել են պրոպագանդելու սփյուռքի պատմության և մշակույթի հարցերը։ Միաժամանակ նշեց, որ սփյուռքի հայագիտական կենտրոնների հետ անմիջական կապի բացակայությունը խոչընդոտում է ժամանակին ինֆորմացիա հաղորդելուն։ Այդ բացը լրացնելուն մեծապես կօգներ գիտական ինֆորմացիայի կենտրոնի և սփյուռքահայ համայնքների պատմության և մշակույթի բաժնի սերտ համագործակցությունը։

«Սփյուռքը որպես միջազգային հարաբերությունների կարևոր գործոն» թեմայով հանդես եկավ պատմական գիտությունների թեկնածու Մ. Գ. Տեր-Գրիգորյանը։ Սփյուռք հասկացությունը բնութագրող կարևոր և տարբերակիչ հատկանիշներից մեկը այդ հանրույթի որոշակի դերն է միջազգային հարաբերություններում, ասաց նա։ Այդ ոլորտում է, որ իր արտահայտությունը կարող է գտնել սփյուռքին բնորոշ գծերից մեկը, այն է՝ լինել փոխհարաբերության միջոց հայրենիքի և բնակության երկրների միջև։ Նշեց, որ միջազգային կյանքում սփյուռքի դերը կախված է մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ նախապայմաններից, հանգամանորեն անդրադարձավ դրանց։ Ի տարբերություն էթնիկ խմբերի, սփյուռքը ներքին պատասխանատվության զգացում ունի ոչ միայն հայրենիքի, այլև ողջ ազգի հակատագրի համար։ Այս հանգամանքը խթանում է միջազգային ասպարեզում սփյուռքի ակտիվացմանը ի պաշտպանություն ազգային շահերի։ Զեկուցողը նկատեց, որ վերոհիշյալ հանգամանքները կարույ են արգելակիչ ուժ հանդիսանալ սփյուռքի ուժացման ճանապարհին։

Պատմական գիտությունների դոկտոր Զ. Մ. Ղասաբյանի զեկուցման թեման էր «Մտորումներ Եվրոպայի հայկական ազգային վարժարանների ստեղծման ու զարգացման ուղիների մասին»։ Հայկական սփյուռքի, այդ թվում Եվրոպայի հայկական համայնքներում ազգային վարժարանների անհրաժեշտությունը ունի կենսական նշանակություն ազգապահպանման ու գոյատևման պայքարում։ Թուրքիայից և Արևմտյան Հայաստանից 1915—1922 թթ. բռնագաղթից հետո Եվրոպայում տարագրված հայերը առանձնահատուկ ուշադրություն նվիրեցին հայ դարավոր մշակույթի վերականգնման ու հետագա զարգացման գործին։ Այնուհետև զեկուցողը ներկայացրեց 1922 թ. ի վեր Բուլղարիայում, Ռումինիայում, Հունաստանում և

Ֆրանսիայում ստեղծված հայկական ազգային վարժարանները, անդրադարձավ Բուլգարիայում և Ֆրանսիայում հայկական կրթության դրվածքին։

«Լիբանանի հայ ազգային վարժարանները քաղաքացիական պատերազմի տարիներին (1975—1948-ական թթ.)» զեկուցումով հանդես եկավ Ի. Գ. Սարգսյանը։ Լիբանանահայ համայնքը իր գոյության ընթացքում ստեղծել է կրթադաստիարակչական հիմնարկների մի ընդարձակ ցանց, որոնք իրենց ներքին կազմակերպությամբ, ուսումնական մակարդակով, ուսուցչական կազմով և աշակերտության թվով աներկրայթեն վկայում են լիբանանահայության կրթասիրության և կենսունակության մասին։ Լիբանանի հայ ազգային վարժարանները իրենց բնույթով ծխական են. յուրաքանչյուր վարժարան կապված է եկեղեցու հետ և դասավանդվում է սրա հովանավորության տակ։ Ուսումնադաստիարակչական հարցերում ազգային վարժարանները ենթակա են հայ ազգային կենտրոնական ուսումնական խորհրդին։ Ներկայացնելով Լիբանանում գործող հայ ազգային վարժարանները նախքան քաղաքացիական կռիվներից մինչև 1980-ական թթ. առաջին կեսը, զեկուցողը հանգեց այն եզրակացության, որ ստեղծված քաղաքական և տնտեսական անկայունությունն ու անասելի բարդ իրադրությունը, այնուամենայնիվ, չի խանգարում լիբանանահայ համայնքին մնալ ազգապահպանման կարևորագույն կենտրոն համայն ազգությունում։

Պատմական գիտությունների թեկնածու Հ. Հ. Մատթիոսյանը խոսեց Մերձավոր արևելքի հայ բնակչության իրավական դրության մասին։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո Մերձավոր արևելքի հայկական համայնքները ստեղծեցին իրենց ներքին զեկավարման մարմիններ, ասաց նա։ Սիրիայի, Լիբանանի, Իրաքի, Պաղեստինի, Անդրհորդանանի հայ բնակչությունը Ազգերի լիգայի մանդատի հանձնաձայն ձեռք բերեց բոլոր այն իրավունքները, որոնք նախատեսված էին պատերազմից հետո։ Այդ իրավունքները հաստատվեցին նաև 1923 թ. հուլիսի 24-ի Լոզանի պայմանագրով։ Այնուհետև զեկուցողը հանգամանքորեն անդրադարձավ Լիբանանի, Սիրիայի, Իրաքի, Հորդանանի հայկական համայնքների իրավական դրությանը։ Նշեց, որ մինչև օրս Լիբանանի և Սիրիայի հայության ներքին կյանքը խարսխված է հայոց ազգային սահմանադրության հոդվածների վրա, իսկ Իրաքի և Հորդանանի հայկական համայնքները զեկավարվում են տեղական կանոնադրություններով՝ թեև իրենց ներհամայնքային կյանքում պահպանում են հայոց ազգային սահմանադրության շատ սկզբունքներ։

Ն. Գ. Բաղդասարյանի զեկուցումը նվիրված էր իրանահայ կանանց հասարակական կազմակերպություններին (XIX դարի վերջ—XX դարի 60-ական թվականներ)։ Իրանում հայկական գաղթօջախի գոյության ողջ ժամանակաշրջանում պարսկահայ բնակչության հասարակական կյանքում զեկավար դերը պատկանում է հոգևոր վարչությանը։ Սակայն այդ բնագավառում իրենց նշանակալից տեղն ունեն նաև իրանահայ կազմակերպությունները, այդ թվում կանանց կազմակերպությունները, որոնք սկսել են ձևավորվել XIX դարավերջին—XX դ. սկզբին։ Իրանի գրեթե բոլոր հայաշատ քաղաքներում հայ կանայք ընդգրկված են բարեգործական, մշակութային, եկեղեցական, կրթական և այլ միություններում։ Իրանահայ կանանց հասարակական կազմակերպությունների հիմնական նպատակը ազգապահպանումն է։ Այդ ուղղությամբ նրանք հսկայական աշխատանքներ են ծավալում պահպանելու հայ հավաքականությունների ազգային դեմքը՝ նպաստելով համայնքի կրթական, մշակութային, հոգևոր և բարոյական դարգացմանը, ինչպես նաև օգնելու նրա չքավոր բնակչությանը։

Պատմական գիտությունների թեկնածու Ս. Մ. Մուրադյանի զեկուցման վերնագիրն էր «Հայերի բնակեցումն ու թվաքանակը Սիրիայում»։ Զեկուցողը նշեց, որ հայկական բնակավայրերը Սիրիայում առաջացել են մ. թ. ա. 1-ին դարում և կապված են Տիգրան 2-րդի արշավանքների հետ։ Հետագա դարերում սիրիահայ դաղութը մեծանում է, սակայն Սիրիայի հայկական բնակավայրերը զգալիորեն համալրվեցին Առաջին համաշխարհային պատերազմից հետո։ Հանգամանորեն ներկայացնելով հետագա ժամանակաշրջանում սիրիահայության թվաքանակը, զեկուցողը եզրակացրեց, որ Սիրիայի հայ համայնքի քանակական կազմը պարբերաբար փոփոխվել է ներքին և արտաքին դրդապատճառների հետևանքով։ Հայ բնակչությունն ապրել ու ապրում է ողջ երկրի տարածքում՝ մասնավորապես խոշոր քաղաքներում։ Այդ համայնքը ներկայացնում է սոցիալական բոլոր խավերն ու դասերը։

Ի. Ի. Գալստյանի զեկուցումը նվիրված էր ավստրալահայ համայնքի ինքնավար մարմիններին և ազգապահպանման գործում դրանց դերին։ Նշվեց, որ XX դ. 50—60-ական թվականներին ավստրալահայ համայնքը Միջին և Մերձավոր արևելքի երկրներից արտագաղթի հետևանքով քանակական մեծ փոփոխություններ կրեց և հայերի թվաքանակը զգալիորեն աճեց։ Ստեղծվեցին Ավսարալիայի հայ եկեղեցական խորհուրդներ, ապա՝ Ավսարալիայի և

Նոր Զելանդիայի հայկական թեմ՝ իր կանոնադրությամբ, թեմական առաջնորդով և թեմական խորհրդով։ Առաջնորդը ոչ միայն ղեկավարում է ավստրալահայ համայնքի ներքին կյանքը, այլև պաշտոնական հարաբերությունների մեջ է պետական իշխանությունների հետ։ Հայաստանյայց առաքելական եկեղեցու Ավստրալիայի և Նոր Զելանդիայի թեմական խորհուրդն ու թեմական առաջնորդը մեծ լումա ունեն ինչպես համայնքի, մշակութային կազմակերպությունների աճի, հայալեզու պարբերականների հրատարակման, նոր սերնդի հայեցի դաստիարակության, համայնքի միասնականության գործում, այնպես էլ մեծապես նպաստում են Խորհրդային Հայաստանի հետ կապերի ամրապնդմանը։ Համայնքի թեմական խորհրդի և նրան հարող կազմակերպությունների առաջնային խնդիրը հայապահպանումն է։

Ա. Ա. Հովհաննիսյանի զեկուցման թեման էր՝ «Թուրքիա. մշակութային ցեղասպանություն»։ Բացի ազգի ֆիզիկական ոնչնչումից գոյություն ունի նաև մշակութային գենոցիդ հասկացությունը։ Այն շոշափվել է 1948 թ. ՄԱԿ-ի ընդունած ցեղասպանությանը վերաբերող համաձայնագրում։ Ազգի մշակութային ցեղասպանությունը արտահայտվում է այն միջոցառումների և գործողությունների մեջ, որոնք ուղղված են այս կամ այն ազգի մայրենի լեզվի, մշակույթի օգտագործման իրավունքի դեմ և նպաստում են ազգային մշակույթի ոչնչացմանը։ Հայ ժողովրդի ցեղասպանության տարիներին Թուրքական կառավարությունը ձգտում էր ոչնչացնել հայկական քաղաքակրթության ամեն մի նյութեղեն ապացույց։ Եղեռնի զոհ դարձան ոչ միայն հայ ժողովրդի միտքն ու խիղճը հանդիսացող տաղանդավոր գրողներ, արվեստագետներ, մտավորականներ, այլ նաև ճարտարապետական հուշարձաններ, ձեռագրեր, գրքեր, արվեստի ստեղծագործություններ։ Մեր օրերում մշակութային գենոցիդը իրագործվում է թե՛ հին և թե՛ նոր մեթոդներով։ Դա կամ հայկական մշակութային հուշարձանների ոչնչացումն է, կամ յուրացումը և կամ պատմական փաստերի միտումնավոր աղավաղումը, շրջանցումը։ Զեկուցողը նշեց, որ հայկական ցեղասպանությանը վերաբերող Եվրոպառլամենտի որոշման 6-րդ կետը նվիրված է մշակութային հարցերին։

Դոկտոր Ռ. Ճեպենյանի (Սիրիա) զեկուցման թեման էր՝ «Տարագրյալ հայ քարավանների՝ երթուղիները Սիրիայի տարածքում 1915 թ.»։ Վերջին տարիներին Մեծ եղեռնի մասին լույս է տեսել վավերագրական պատկառելի գրականություն։ Զգալի կարևորություն է ներկայացնում Սիրիայի տարածքում 1915 թ. տեղահանությունների ենթարկված հայ տարագիրների քարավանների երթուղիների ճշգրտման և դրանց նկարահանման աշխատանքը, ասաց նա։ Այդ նպատակով, 1988 թ. հալեպահայ անհատների ուժերով կազմակերպվել է հատուկ արշավախումբ, որը, նախապես ճշգրտելով հայ զանգվածների անցած ճանապարհը, ընտրել է մի քանի երթուղի։ Այնուհետև զեկուցողն անդրադարձավ այն երթուղիներին, որոնք դարձել են հայ տարագիրների մահվան կայանները, նշեց, որ եղել են նաև այլ երթուղիներ, որոնք ճշգրտման և ուսումնասիրման կարիք ունեն։

Հ. Ե. Ղազարոսյանի զեկուցման թեման էր՝ «Իրվագներ հայ-կիպրական առնչություններ պատմությունից»։ Նշելով, որ այդ առնչությունները սկսվում են IV դարից, զեկուցողը խոսեց դեպի Կիպրոս հայերի առաջին դանգվածային ներգաղթի, Կիլիկիայի հայկական պետության հետ Կիպրոսի քաղաքական, մշակութային և բարեկամական կապերի, Ղղրին Թուրքիայի, ապա Անգլիայի տիրապետության տակ անցնելու, կիպրահայ գաղութի վերացման, XIX դ. 90-ական թվականների և 1915 թ. Մեծ եղեռնից հետո Կիպրոսում բազմահազար հայ ընտանիքների ապաստանելու մասին։ Հ. Ղազարոսյանը անդրադարձավ 1974 թ. Թուրքական նախահարձակման հետևանքով կիպրահայ համայնքի կրած նյութական կորուստներին, հայ գաղութի կյանքի բազմազան կողմերին։

«Թուրք հանրության հոգեբանական կերպավորումը Զապել Եսայանի ստեղծագործություններում» զեկուցումով հանդես եկավ Լ. Ս. Սահակյանը։ Զ. Եսայանի ստեղծագործությունները ընդգրկում են պատմական մի մեծ ժամանակաշրջան՝ 1895—1936 թթ., միշավայրը Պոլիսն է, Արևմտյան Հայաստանը, Կովկասը։ Գրողն անդրադարձել է սուլթանական ու երիտթուրքական բռնատիրությունների գործունեությանը՝ կապված նրանց քաղաքական հայացքների և հայկական կոտորածների հետ։ Իր ստեղծագործություններում հայ կյանքն ու կենցաղը, հայ ժողովրդի պայքարի ոգին և ընդվզումները ներկայացնելուն զուգընթաց, Զ. Եսայանը հանգամանորեն անդրադարձել է նաև թուրք համայնքի վարք ու բարքին, նրա ներսում կատարվող փոփոխություններին, մարդասիրական գաղափարներ ունեցող առանձին անհատների կերպավորմանը։ Վերլուծելով գրողի մանր կտավի ստեղծագործությունները, որոնց հերոսը կամ թուրք մարդն է և կամ թուրք հանրությունը, զեկուցողը նկատեց, որ հեղինակի անկեղծ ցանկությունն է՝ տեսնել թուրք հանրությանը վերափոխված, համամարդկային, առողջ բնազդով։ Զեկուցողի եզրակացությունն այն է, որ Եսայանի հումանիստական գաղափարների դրսևորումները առանձին անհատների կերպարներում համոզիչ չեն, կտրված են

կյաներից, և հեղինակը իզուր է նրանց դարձրել իր ստեղծագործության գաղափարական անկյունաքարը։

Ն. Ա. Մկրտչյանի զեկուցումը նվիրված էր Վալանսի հայ համայնքին։ Հանգամանորեն ներկայացնելով համայնքի սկզբնավորումը, զեկուցողը անդրադարձավ նրա կառուցվածքի ձևավորմանը, ազգային-մշակութային կյանքին, երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին վալանսահայերի վիճակին, հետպատերազմյան շրջանում տեղի ունեցած մարդագրական և սոցիալական տեղաշարժերին, հասարակական-քաղաքական կյանքին, համայնքի դոյատևման հեռանկարներին։

Պատմական գիտությունների թեկնածու Ն. Տ. Զալբմյանի զեկուցման թեման էր՝ «Հայոց ցեղասպանության ականատեսների բանավոր պատմության տեսագրման և գնահատման հարցի շուրջ։ 1915 թ. թուրքական կառավարության ծրագրած կոտորածներից ու զանգվածային տեղահանություններից հրաշքով փրկված հայ ժողովրդի զավակները հարկադրաբար ցիրուցան եղան աշխարհով մեկ։ Հաստատվելով տարբեր երկրներում, ժամանակի ընթացքում այդ սերունդը աստիճանաբար կարողացավ իր մեջ ուժ գտնել և վերակազմակերպել իր կյանքը։ Սակայն ճաշակած անասելի ու ահավոր փորձությունները, դառն ու անհույս օրերի հիշողությունը դրոշմվեցին գաղթական սերնդի գիտակցության մեջ, դարձան նրա կյանքի անբաժանելի մասը և պայքարի ոգի արթնացրին գոյատևման ու ազգային ինքնագիտակցության պահպանման համար։ Մեծ եղեռնի ականատեսների հուշերը, լինելով փաստական վկայություններ, մի կողմից նպաստելու են հայ ժողովրդի պատմության կարևոր շրջանի ուսումնասիրմանը որպես օժանդակ աղբյուր, մյուս կողմից՝ ծառայելու են Թուրքիայի զեկավար շրջանների ու պատմական ճշմարտությունը խեղաթյուրող կեղծարար պատմաբանների ջանքերը դատապարտելու անհետաձգելի գործին։ Այս է ցեղասպանության ականատեսների հուշերի կարևորությունն ու գիտական նշանակությունը։

Մ. Ա. Հովսեփյանի զեկուցումը նվիրված էր 1980-ական թվականների առաջին կեսի իրանահայ համայնքին։ Իրանի իսլամական հանրապետությունում ստեղծվել է լարված իրավիճակ ազգային հարցի շուրջ, ասաց նա։ Առաջին հայացքից թվում է, թե իրանահայ համայնքի վիճակը համեմատաբար բարեկեցիկ է, սակայն հայերի նկատմամբ կառավարող շիա հոգևորականության քաղաքականության հիմքում ընկած է «մտրակի և բլիթի» սկզբունքը։ Զեկուցողը հանգամանորեն անդրադարձավ համայնքի քաղաքական ուժերի բևեռացմանը, մշակութային նոր կազմակերպությունների ստեղծմանը, իրանահայության հասարակական-քաղաքական կյանքի վրա Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության ազդեցությանը, իրանահայության արտագաղթին։

Զեկուցումների շուրջ ծավալվեց մտքերի աշխույժ և անկաշկանդ փոխանակություն։

Նստաշրջանի արդյունքներն ամփոփեց ՀԽՍՀ ԳԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Բ. Ն. Առաքելյանը։